

# «Աստղագիտությունը շքեղություն է, եթե գրոյից սկսենք, բայց ինչքան է ճիշտ ունեցածը կորցնելը»

Հայաստանում գիտական լրագրությունը զարգացնելու նպատակով ստեղծվել է գիտության մասին գրող լրագրողների խումբ: Գիտական աշխատողները համագործակցելու են լրատվամիջոցների հետ՝ ապահովելով մասնագիտական տեղեկություն, օպերատիվություն և արդյունավետություն: Այս մասին տեղեկացնում է հայկական աստղագիտական ընկերության համանախագահ, Բյուրականի աստղադիտարանի առաջատար գիտաշխատող **ԱՐԵՎ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԸ**: Միջազգային համաժողովների ընթացքում նա պարզել է, որ բոլոր ժողովուրդներն էլ հետաքրքրվում են տիեզերական թեմաներով: Համաշխարհային վիճակագրության համաձայն՝ տարբեր երկրների լրատվամիջոցներում գիտական հրապարակումների 50-90 տոկոսը այս կամ այն կերպ առնչվում է տիեզերական թեմաներին՝ աստղագիտություն, աստղաֆիզիկա, տիեզերական աղետներ, այլնուրակայիններ և այլն: Սեզ մոտ ակնհայտորեն մարդիկ հեռացել են և՛ մշակույթից, և՛ գիտությունից, և՛ հոգևորից: Ըստ Արեվ Միքայելյանի՝ գիտության կապը հասարակության հետ ամրապնդելու համար կարևոր է գիտնականի դերը, սակայն խնդիրները քիչ չեն հենց գիտության ոլորտում: Կա ապրելու խնդիր: Գիտության աշխատողը լավ չի վարձատրվում: ՌԻՆԵՆՔ այսօր երիտասարդ կադրեր: Ի՞նչ հեռանկար ունեն նրանք Հայաստանում: Չե՞ն հեռանում արդյոք երկրից:

**«Աստղագիտությունը միջազգայնացված է. եթե լավ աստղագետ ու, կարևոր չէ՝ որտեղ ես ապրում, կարող ես համագործակցել, դրամաշնորհներից օգտվել և այլն,-** ասում է Արեվ Միքայելյանը: **- Փորձում ենք ինքներս լուծել այդ խնդիրը, թեև աշխատավարձը, իսկապես, շատ ցածր է: Բայց դա միակ պրոբլեմը չէ. գիտության զարգացման համար առաջնային են տեխնիկական հագեցվածությունը, սարքավորումների արդիականացումը: Տրամադրվող ֆինանսավորման հիմնական մասն օգտագործվում է սարքավորումների վրա: Պատահական չէ, որ աստղագիտությունը զարգանում է հարուստ երկրներում: Հայաստանը բացառություն է, որ տնտեսապես թույլ երկիր լինելով՝ քիչ թե շատ բարձր մակարդակ ունի այս ոլորտում»:** Աստղագետը նշում է, որ Բյուրականի աստղադիտարանը լավագույններից մեկն է աշխարհում, սակայն աստիճանաբար հետ է ընկնում. **«Աստղագիտությունը շքեղություն է (ինչպես հաճախ ասվում է), եթե գրոյից սկսենք, բայց ինչքան է ճիշտ ունեցածը կորցնելը: Ի դեպ, աստղագիտության տարածաշրջանային կենտրոն ընտրվելու հայտով Հայաստանը դիմել է Միջազգային աստղագիտական միությանը: Առաջիկա ամիսներին արդյունքները պարզ կլինեն: Մենք աստղագիտական լավ դպրոց ունենք, պետք է ճիշտ ներկայացնենք մեր ունեցածը և այդ խաղաքարտից օգտվենք»:**

Արեվ Միքայելյանը փաստում է նաև, որ գիտության տարբեր ճյուղերը երկրի վրա բավարար չավով զարգացած են, ուսումնասիրված, և հիմա տիեզերքից են հայթայթում ինֆորմացիա ու տրամադրում մյուս գիտություններին: Աստղագիտությունը կարևոր է նաև այդ առումով:

Աստղերն ու գիշերը, տիեզերական ուսումնասիրությունները, հավանաբար, միայն գիտական մոտեցում չեն պահանջում: Հետաքրքիր է իմանալ՝ աստղագիտության մեջ գիտությունն է շատ, առեղծվածները, թե՞ ռոմանտիկան: «Առաջնային է գիտական մոտեցումը, բայց առեղծված եթե չլինի, մոտիվացիա չի ունենա գիտնականը: Նկատելու հատկությունը, նոր բան գտնելը, չնկատված երևույթը բացահայտելը շատ կարևոր է աստղագետի համար: Ռոմանտիկան էլ ոգեշնչման համար է», - չի ժխտում աստղագետը: